ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԲՆԱԿԵՑՈՒՄԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ (1922—1923)

Զ. Մ. ՂԱՍԱԲՅԱՆ

Բուլղարիան շարունակ ապաստան է տվել թուրքական յաթաղանից փրկված հազարավոր հայերի։ Բուլղար ժողովուրդն իր եղբայրական վերաբերմունքը դրսևորեց անօթևան հայ զանգվածների նկատմամբ նաև նրանց վերջին մասսայական գաղթի ժամանակ (1922)։

1915 թ. եղեռնից փրկված հայության բեկորները 1918 թ. վերադարձել էին իրենց ամայացած օջախները (Զմյուռնիա, Նիկոմեդիա, Բյութանիա, Արևելյան Թրակիա)[1]։ Սակայն շուտով, հույն-թուրքական պատերազմի հետևանքով, վերոհիշյալ հայաշատ բնակավայրերը վերածվեցին պատերազմի թատերաբեմի։

Զմյուռնիան և Բրուսան գրավելուց հետո, հետապնդելով նահանջող հունական բանակին, քեմալականները շարժվում են դեպի Դարդանել և Կ. Պոլիս՝ նպատակ ունենալով մտնել Արևելյան Թրակիա[2]։ Դրա հետևանքով փախուստի մատնված հայերը կուտակվել էին Մուդանիայի և Գեմլեգի նավամատույցներում՝ նպատակ ունենալով անցնել Բալկաններ։ Թեև այստեղ գտնվող ֆրանսիական օկուպացիոն բանակը պիտի պաշտպաներ արտագաղթող հայերին, սակայն խուճապի հետևանքով շատերը ծովահեղձ եղան կամ դարձան առաջ խաղացող թուրքական բանակի զոհը։ Գաղթականների միայն մի մասին հաջողվեց անցնել Արևելյան Թրակիա[3]։

Այդ օրերին Ռոդոստո քաղաքում ապաստանել էին 8.400, Մալգարայում՝ 1.000, Չորլուլում՝ 900, Սիլիվրիայում՝ 500 հայ գաղթականներ։ Մոտավորապես 1.500 հայեր ցրվել էին Էրելիիում, Շարբ-Քյոյում և Եդեյան ծովի զանազան կղզիներում[4]։ Կոտորածի վտանգ էր սպառնում թե՛ սրանց և թե՛ տեղի հայ բնակչությանը։

Նիկոմեդիայի և Բյութանիայի շրջանների 130.000 հայերից եվրոպական ծովափ էր անցել 13—18 հազարը[5]։ Մեծ մասը կոտորվել էր փախուստի ժամանակ։ Այդ սարսափելի կոտորածը հուզումներ առաջացրեց նաև բուլղարահայ գաղութում։ Սոֆիայի հայերը տեղեկանալով Մուդանիայի, Գեմլեգի և Բանդրմայի աղետների մասին, կազմակերպեցին նյութական օգնություն և հավաքած գումարները ուղարկեցին Արևելյան Թրակիայի զանազան քաղաքները։ Սակայն այստեղի քրիստոնյա բնակչությունը վախենալով թուրքական բանակի ներխուժման վտանգից, արտագաղթում էր։ Հայերը գաղթում էին

---

1 «Հայրենիք», Բոստոն, 1927, № 3, էջ 120—122։

2 Мустафа Кемал, Победа новой Турции, 1921—1927 гг., М., 1934, стр. 93.

3 «Հայաստան» (օրաթերթ, Պլովդիվ), 25. IX. 1922։

4 Նույն տեղում։

5 «Ճակատամարտ» (օրաթերթ, Կ. Պոլիս), 5. X. 1922։

խմբերով, հնարավորին չափ խուսափելով ավազակների ու մարդասպանների խմբակային հարձակումներից[6]։

Զորլուից և Ագրիանապոլսից գաղթականները գնում էին դեպի Հունաստան և Բուլղարիա։ 1922 թ. սեպտեմբերի 21-ին գաղթականների առաջին քարավանները հասան բուլղարական սահմանը։ Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով թեև Բուլղարիան գտնվում էր տնտեսական ծանր վիճակում, այդուամենայնիվ բուլղարական կառավարությունը, Ալեքսանդր Ստամբոլիյսկու գլխավորությամբ, որոշեց չփակել սահմանները հայ գաղթականների առաջ։ Այդ առթիվ ընդունած որոշման մեջ մասնավորապես ասված էր. «բուլղարական կառավարությունը և ժողովուրդը իր այս դժվարին օրերին չի լքում ավանդական դարձած բարեկամական վերաբերմունքը հայերի նկատմամբ»[7]։

Բուլղարահայ 25.000-անոց գաղութը ևս միջոցներ էր ձեռնարկում իր տարագրված եղբայրներին օգնելու համար։ 1922 թ. հոկտեմբերի 3-ին Պլովդիվում տեղի ունեցավ խորհրդակցական ժողով, որին մասնակցում էին գաղութում գործող բոլոր կուսակցությունների, այդ թվում նաև հայ կոմունիստների ներկայացուցիչը[8]։ Հրավիրվել էին նաև Պլովդիվի հայկական հասարակական և մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչները (Ազգային վարժարանի հոգաբարձությունը, «Վահան Մանվելյան» գեղարվեստասիրաց ընկերությունը, «Գրասիրաց» եղբայրության, «Կարմիր խաչի», «Շանթ» միության, բոլոր հայրենակցական միությունների և այլն)[9]։

Խորհրդակցական ժողովը պետք է «ժամանակավոր գաղթականական հանձնաժողով» ստեղծեր, որը զբաղվելու էր գաղթականների ընդունման, տեղավորման և այլ հարցերով։ Որոշվեց կազմել 7 անձից բաղկացած հանձնաժողով, որը պետք է զբաղվեր միայն Պլովդիվ ժամանող գաղթականների հարցերով։

Հանձնաժողովը գործելու էր, այսպես կոչված, «Ազգային իշխանության թաղական խորհրդի» հսկողության ներքո։ Պլովդիվի թաղական խորհուրդը հայ գաղթականներին օգնելու համար «ժամանակավոր գաղթականական հանձնաժողովին» հատկացրեց 10.000 լեվ։ Ժողովի ավարտից հետո հանձնաժողովի նախագահ, դոկտոր Թ. Թովմասյանը, Պլովդիվի ս. Գևորգ եկեղեցու ավագ քահանա Վ. Տեր-Մինասյանը և հանձնաժողովի այլ անդամներ մեկնեցին Սվիլենգրադ՝ գաղթականներին ընդունելու և տեղաբաշխելու համար։ Գաղթականներին օգնելու նպատակով Բուլղարիայի կառավարության ֆինանսների մինիստրը հրամայել էր նրանց գույքն ու ունեցվածքը ազատել մաքսից։

1922 թ. Բուլղարիայի հայաշատ քաղաքներն էին՝ Պլովդիվը, Վառնան, Ռուսեն, Բուրգազը, Սլիվենը, Շումենը (Կոլարովգրադ), Սոգոպոլը, Այտոսը, Պազարջիկը, Ստարա-Զագորան և Կարնոբատը։ Մինչև 1922 թ. հոկտեմբերի

---

6 Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 583։

7 «Зора», София, 1922, № 1036. «Հայաստան», 25. IX. 1922։

8 1910—1923 թթ. Բուլղարիայի կոմունիստական կուսակցության կենտկոմին կից գոյություն ուներ հայկական սեկցիա, որի կազմակերպությունները Բուլղարիայի զանազան քաղաքներում լեգալ գործունեություն էին ծավալում։

9 «Ճակատամարտ», 8. X. 1922։

18-ը Բուլղարիա ներգաղթած հայերի ընդհանուր թիվն էր 15.000, որոնցից Պլովդիվ էին ժամանել 1.055-ը (մեծ մասը Բրուսայի շրջանի գյուղերից)։ Շուրջ 7.000 գաղթականներ տեղավորվել էին սահմանամերձ հայաշատ քաղաքներում (Հարմանլի, Հասկովո, Յամբոլ, Կրջալի, Սվիլենգրադ և այլն)։ Շատերը ապաստանել էին իրենց բարեկամների, համաքաղաքացիների, ծանոթների կամ օգնության հասնող հայերի մոտ։ Մնացած 8.000 գաղթականները ժամանակավորապես տեղավորվեցին այլ քաղաքների հայկական դրպրոցներում, եկեղեցիներում, ակումբներում և բուլղարական զորանոցներում ու հիվանդանոցներում։

«Ժամանակավոր գաղթականական հանձնաժողովի» տվյալներով՝ 1922 թ. վերջում Պլովդիվում բնակություն էին հաստատել 1.280 հոգի, Բուրգազում՝ 1.000, Այտոսում՝ 350, Կարնոբատում՝ 180, Սլիվենում՝ 1.290, Յամբոլում՝ 600, Նովա-Զագորայում՝ 700, Ստարա-Զագորայում՝ 1.000, Պազարջիկում՝ 1.000, Վառնայում՝ 1.000, Բորիսովգրադում (Պրրվոմայ) 800 հոգի և այլն[10]։ Սակայն գաղութում ընդհանուր երևույթ էր տեղափոխումն ու հոսունությունը։ Գաղթականներին օգնելու հոգսերի մեծ մասն ընկել էր Պլովդիվի հայաշատ գաղութի վրա, չնայած այլ քաղաքներում ևս տեղական հանձնախմբերը հսկայական աշխատանք էին կատարում։

1922 թ. հոկտեմբերի 21-ին Պլովդիվի նահանգապետի հրավիրած ժողովում գաղութի ներկայացուցիչներից ընտրվել էր նոր «Գաղթականական հանձնաժողով», որը շարունակելու էր գաղթականների հետ տարվող աշխատանքները։ Հանձնաժողովին տրվել էին լայն իրավունքներ՝ պետական հսկողության ներքո[11]։ Ի վիճակի չլինելով հոգալու գաղթականների հերթական քարավանների նյութականը՝ հանձնաժողովն այդ նպատակով դիմել էր Կ. Պոլսի պատրիարքարանին և Բուխարեստի թաղական խորհրդին։ Ակտիվ գործունեություն էին ծավալել գաղութի ղեկավարներ դոկտոր Թ. Թովմասյանը, դոկտոր (կոմունիստ) Գ. Թյությունջյանը և Գ. Ադամյանը։ Նրանց նախաձեռնությամբ Պլովդիվում գաղթականների օգտին հավաքվեց 300.000 լեվ։ Այտոսի մի քանի ընտանիքներից բաղկացած հայկական գաղութը գաղթականներին օգնելու համար հավաքեց 15.000 լեվ, Սլիվենինը՝ 5.677, Յամբոլինը՝ 11.520։

1922 թ. հոկտեմբերի 4—15-ը հայ գաղթականների օգտին Սոֆիայում հավաքվել էր 12.000, Ռուսեում՝ 10.000, Շումենում՝ 3.000, Նովա-Զագորայում՝ 2.750, Պանագյուրիշտեում՝ 2.000, Բորիսովգրադում՝ 2.000 լեվ[12]. Սակայն հավաքած գումարներով հնարավոր չէր բավարարել գաղթականների պահանջները։ Նրանցից 1.600-ի վիճակը ծայր աստիճանի վատթար էր։

Առաջին իսկ օրերից գաղթականներին խնամելու համար կազմվել էին «Կարմիր խաչի» խմբեր, որոնք ոչ միայն հագուստ ու սնունդ էին մատակարարում նրանց, այլև հիվանդանոցներում բուժում ու խնամում էին հիվանդներին։ Այդ աշխատանքները ղեկավարում էին Պլովդիվի հայ բժիշկներ Թ. Թովմասյանը, Գ. Օրմանյանը և Գ. Թյությունջյանը, որոնք իրենց հիվանդանոցները տրամադրել էին հիվանդ գաղթականներին և առանց հերթափո-

10 «Հայաստան», 4. XI. 1922։

11 Պլովդիվի հոգևոր խորհրդի արխիվ, արձանագրությունների մատյան, 1922, էջ 247։

12 «Հայաստան», 25. XI. 1922։

խի աշխատում էին օր ու գիշեր, Բարեբախտաբար, քչերն էին տառապում վարակիչ հիվանդություններով։

Պլովդիվի «Գաղթականական հանձնաժողովը» իր կազմակերպվածությամբ օրինակ ծառայեց մյուս քաղաքներին և հնարավորություն տվեց հաղթահարելու բոլոր դժվարությունները։ Պլովդիվ ժամանող գաղթականները բացի մթերքներ և դրամական միջոցներ ստանալուց, շրջապատված էին հոգատարությամբ։

Գաղթականների տեղավորման հարցը դժվար էր հատկապես Բուրգաս քաղաքում։ Առաջին քարավանով այստեղ ժամանել էին 210 հայեր։ Ո՞չ դրպրոցի շենքը, ո՞չ եկեղեցին ու բակը չէին բավականացնում նրանց տեղավորման համար։ Գաղութի ղեկավարները և «Գաղթականական հանձնախմբի» անդամները վարձեցին Բուրգազի թատրոնի շենքը և միաժամանակ տեղավորեցին նրանց։ Այնուհետև գաղթականներին բնակեցրին Այտոս և Կարնոբատ քաղաքներում։

1922 թ. նոյեմբերին Սոֆիայում ստեղծված «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովի» տվյալներով՝ նման իրավիճակ էր ստեղծվել նաև մի շարք այլ քաղաքներում։ Այսպես, օրինակ, Սլիվենում գաղթականների որոշ մասին տեղավորեցին մերձակա Կերմենլի կայարանում։ Նրանց մեծ օգնություն ցույց տվեցին նաև բուլղարներ Վանել Դանչևը, Վասիլ Օվչարովը, Կնչևները և Անաստասովները[13]։

Փոխգնդապետ Բոշնակովի և մայոր Դամյանովի կարգադրությամբ առաջին քարավանով Ցամբոլ ժամանած 194 հայերին տրամադրվել էին տեղի ռազմական հիվանդանոցն ու զորանոցը, հոգալով նաև նրանց սնունդը։ Ցամբոլի 7—8 ընտանիքներից բաղկացած հայ գաղութը կազմակերպել էր հացի և վառելանյութի մատակարարումը[14]։

Ռուսերում ապաստանել էին ավելի քան 1.110 գաղթականներ, որոնց օգնում էին տեքստիլ մանարաններում աշխատող հայ բանվորները, ինչպես նաև տեղի թաղական խորհուրդն ու «Գաղթականական հանձնախումբը»։ Բժիշկ Մ. Գարաճյանի ղեկավարությամբ կազմակերպվել էր հատուկ հիվանդանոց, որն ապահովված էր անհրաժեշտ դեղորայքով։

Բոլոր գաղթականական հանձնախմբերը հրահանգներ էին ստանում Պլովդիվից, սակայն առանձին քաղաքների միջև սերտ համագործակցություն չկար։ Փաստորեն գաղութում գործում էին երեք կենտրոններ, որը և տարաձայնությունների պատճառ էր դառնում։ Անհրաժեշտ էր ստեղծել միասնական կենտրոնական հանձնաժողով։ Դրան հավակնում էր Սոֆիայի հանձնախումբը, որը ուներ «Գաղթականական ֆոնդ» և ձգտում էր միասնության։ Նման ֆոնդ ստեղծվել էր նաև Պլովդիվում և Ռուսեում։

1922 թ. նոյեմբերի սկզբներին Սոֆիայի հանձնախումբը դարձյալ դիմեց Պլովդիվի հանձնաժողովին՝ պահանջելով կենտրոնական հանձնաժողովի պարտականությունները հանձնել իրեն։ Սոֆիայի հանձնախումբը իր պահանջը փաստարկում էր բուլղարական կառավարության հետ ունեցած անմիջական կապով։ Նոյեմբերի կեսերին նույն հանձնախումբը կապ հաստա-

13 «Հայաստան», 4. XI. 1922։

14 Նույն տեղում։

տեց կառավարության և տեղական հանձնախմբերի հետ ու իր վրա վերցրեց կենտրոնական հանձնաժողովի պարտականությունները։

Բուլղարական կառավարությունը հաստատեց նրա գործունեությունը և այն դրեց ներքին գործերի մինիստրության հսկողության ներքո։

1922 թ. հոկտեմբերի 30-ին բուլղարական կառավարության ներքին գործերի մինիստր Ռայկո Դասկալովը «Eco de Bulgarie» թերթի խմբագրի հետ ունեցած հարցաղրույցի ժամանակ հայտարարեց, որ «Մինչև օրս Բուլղարիայում ապաստանել են 20.000 հայ գաղթականներ։ Սոֆիայում ստեղծված «Գաղթականական հանձնաժողովը» զբաղվելու է նրանց հարցերով։ Այդ կենտրոնական կազմակերպությունը այժմ ստեղծել է «Գաղթականական ֆոնդ»՝ կառավարության հսկողության ներքո։ Հանձնաժողովը կարող է դիմել ոչ միայն Բուլղարիայում ապրող ազգակիցներին, այլև օտարներին։ Նրա գործունեության մեջ է մտնում գաղթականներին նաև աշխատանքով ապահովելու հարցը։ Այժմ՝ աշնանը և մոտեցող ձմռանը դժվար է աշխատանք ճարելը, սակայն գարնանը գործի են դրվելու նրանց բազուկները։ Մենք հուսով ենք, որ Բուլղարիայում ապրող հայերի բախտավոր մասի (խոսքը տեղացի բարեկեցիկ հայերի մասին է—Զ. Ղ.) օժանդակությամբ կհաղթահարենք դժվարությունները»[15]։ Հետագայում նա իր մոտ հրավիրելով «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովի» անդամներին, հայտարարել էր. «Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, Բալկանյան պատերազմներից հետո, մոտավորապես 500.000 բուլղար գաղթականներ ներգաղթեցին Արևելյան Թրակիայից, Մակեդոնիայից, Դոպրուջայից, Կ. Պոլսից և այլ տեղերից։ Նրանք բուլղարներ էին և մենք պարտավոր էինք նրանց ընդունել... Այսօր հայ գաղթականներն են բախում մեր դռները։ Նոր գաղթականներ ընդունելը այլևս հնարավոր չէ, սակայն դժբախտների առաջ մենք բաց արեցինք մեր դռները, որովհետև մենք սիրում ենք հայ ժողովուրդը, կարեկցում նրան։ Այժմ տեղացի հայերը պետք է կատարեն իրենց պարտքը՝ Սոֆիայի «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովի» միջոցով, որը հանձնված է կառավարության կողմից և ունի իր մասնաճյուղերը 12 քաղաքներում»[16]։

1923 թ. սկզբին Սև. ծովի վրայով Վառնա էին հասել հայ գաղթականների վերջին քարավանները։ Նրանք բուլղարական կառավարությանը հեռագրեցին. «Այսօր՝ 26 նոյեմբերի, ժամը 11-ին Վառնայի մեջ գտնված հազարավոր հայությունը միտինգի մը մեջ որոշեց իր անկեղծ զգացումները և երախտագիտությունը հայտնել բուլղար կառավարության և ազնիվ ժողովուրդին, հայ ազգին հանդեպ ցույց տված մարդասիրության և ասպնջականության համար»[17]։ Սոֆիայի «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը» հավաքեց 70.000 լեվ և բաշխեց Բուրգաղ, Սլիվեն, Յամբոլ, Ստարա-Զագորա, Պազարջիկ, Պլեվեն, Հասկովո քաղաքներում տեղավորված գաղթականներին։ Բացի այդ, այն բուլղարական կառավարության ֆինանսների մինիստրի միջոցով կարողացել էր վերացնել մաքսը և հարկերը գաղթականների գույքի, լծկան անասունների, սայլերի և կառքերի համար, ինչպես

---

15 „Eco de Bulgarie", Sofia, 30. X. 1922.

16 Նույն տեղում։

17 «Ժողովուրդի ձայն», Կ. Պոլիս (Ղալաթիա), 16. XII. 1922։

նաև առողջապահության մինիստրությունից Թուրքիայից գաղթած հայ բժիշկների համար աշխատելու հատուկ թույլտվություն էր ձեռք բերել։ «Կենտրոնական գաղթականական հանձնաժողովի» ջանքերի շնորհիվ վերացվեց մայրաքաղաքում և մեծ քաղաքներում գաղթականների հաստատվելու արգելքը։ Ձեռք բերվեց ռազմական մինիստր Տոմովի հատուկ թույլտվությունը՝ մի շարք զորանոցներ, զինվորական հիվանդանոցներ և պահեստներ դաղթականներին տրամադրելու մասին։ Ռոդոստոյից, Ցոբլուից, Մալգարայից և Ադրիանապոլսից փոխադրված եկեղեցական գույքը մաքսից ազատվեց և հանձնվեց Պլովդիվի եկեղեցուն։

Դրսից օգնություն չստանալով, 1922 թ. նոյեմբերի 20-ին «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը» Սոֆիայի հայ գաղութին և բոլոր սփյուռքահայերին դիմեց հետևյալ խնդրանքով. «Յարդ 20.000 գաղթականներ հասած են Բուլղարիա, մեծ մասամբ թշվառ և կարոտ։ Երեկ շեն բույն մը, տաքուկ օջախ մը ունեին անոնք, այսօր անտուն թափառական մերկ և անոթի։ Հայրենակիցներ, մեր ավելի բախտավորներիս պարտքն է գերագույն զոհողությունը հանձն առնել թույլ չտալու համար, որ մեր տարաբախտ եղբայրներն ու քույրերն անոթի գալարվին՝ ցուրտեն սառին։

Պերճանքեն ու խնջույքեն խնայված լումա մը, հագուստ մը, կյանքեր պիտի փրկե։ Ո՞վ չպիտի ուզեր զգալ, ունենալ այդ գերագույն գոհունակությունը։ Ուրեմն պատրաստեցեք ձեր սրտաբուխ և լիառատ նվերները, հագուստեղենի և ճերմակեղենի վերաբերյալ, հանձնելու համար ձեզի դիմող հանձնախումբին»[18]։

Գործադրված ջանքերի շնորհիվ 1922 թ. դեկտեմբերի վերջին Սոֆիայի «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովը» ռումինահայ «Կարմիր խաչից» ստացավ 40.000 լեյ, Կ. Պոլսի «Կարմիր խաչից»՝ 1089 կտոր սպիտակեղեն, Կոստանցայի հայերից՝ 50.000 լեյ, Անգլիայի «Հայ տիկնաց միությունից»՝ 20 անգլիական ոսկի (12.200 լեվ), Ամերիկահայ գաղութից՝ 5.500 դոլար։ Այսպիսով՝ Բուլղարիայում և արտասահմանում գաղթականների համար հավաքած ընդհանուր գումարը կազմեց 2.000.000 լեվ[19]։

1922 թ. դեկտեմբերին «Գաղթականական կենտրոնական հանձնաժողովին» կից ստեղծվեց աշխատանքի տեղավորման բյուրո։ 1923 թ. սկզբին գաղթականների մեծ մասը անցել էր աշխատանքի։

1923 թ. 50.000-ի հասնող բուլղարահայ գաղութում արդեն օրակարգի հարցեր էին դարձել ներքին կառավարման, կենտրոնական ղեկավարության, հասարակական և մշակութային կյանքի կանոնավորման խնդիրները։ Այս և գաղութի առաջ ծառացած մյուս հարցերի լուծման գործում վճռական դեր խաղացին հայ կոմունիստները և առաջադեմ ուժերը։

ПРИЕМ И ПОСЕЛЕНИЕ ПЕРЕСЕЛЕНЦЕВ-АРМЯН В БОЛГАРИИ (1922—1923)

З. М. КАСАБЯН

Резюме

В тяжелые годы армянских погромов и резни в Турции (1896—1897, 1915, 1922 гг.) более 50.000 армян нашло убежище в Болгарии, в том

18 «Հայաստան», 25. XI. 1922։

19 Նույն տեղում։

числе 20.000 — в 1922—1923 гг. Усилиями местных армян в Болгарии была создана «Комиссия по приему армян-беженцев», которая, действуя под контролем болгарского правительства, проделала большую работу в стране и за рубежом для оказания помощи беженцам. Правительство Александра Стамболийского дало армянам широкие права на прием и поселение беженцев, организацию внутреннего правления армянской колонии, оказало содействие в деле основания армянских школ, церквей, библиотек и пр. Была создана специальная комиссия по трудоустройству и сбору средств для помощи беженцам.